



ՆԱԽԱԲԱՆ

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության 16-րդ հատորն ընդգրկում է Պատմական Հայաստանի Վասպուրական նահանգի և հարակից շրջանների հեքիաթները, որով ամբողջանում է հայկական բնաշխարհի աչքի ընկնող ազգագրական շրջանի բանահյուսական հիշյալ ժանրի հոգևոր հարստությունը: «Հայ ժողովրդական հեքիաթների» 14-րդ, մասամբ և 15-րդ հատորի նախաբանում հանգամանորեն բնութագրված է Վասպուրական աշխարհի պատմամշակութային, տնտեսական ու քաղաքական կյանքի պատկերը:

Եթե նախորդ երկու հատորներն ընդգրկում են Վասպուրական-Վան բնակավայրերի հեքիաթները, ապա սույն հատորը համալրում է Վասպուրականի շրջակա բնակավայրերի և նույնիսկ ոչ անմիջական հարակից վայրերի հեքիաթները: Ներկա 16-րդ հատորի նյութերը տպագիր և անտիպ են: Տպագիր նյութերը պատկանում են վաստակաշատ բանահավաք-ազգագրագետ Սարգիս Հայկունու գրչին:

Այդ հեքիաթները լույս են տեսել «Էմինյան ազգագրական ժողովածուի» 2-րդ (Մոսկվա - Վաղարշապատ, 1901թ.) և 4-րդ (Մոսկվա - Վաղարշապատ, 1902թ.) հատորներում: Տեղագրական առումով դրանք ընդգրկում են՝ Վանից 1 հեքիաթ (ԷԱԺ, 2-րդ), Խլաթից 7 հեքիաթ (ԷԱԺ, 4-րդ), Արճեշից 3 հեքիաթ (ԷԱԺ, 4-րդ), Արծկեից 7 հեքիաթ (ԷԱԺ, 4-րդ): Այս հատորում ենք գետեղել Ս.Հայկունու գրի առած և ԷԱԺ-ի 4-րդ հատորում տպագրված Նորադուզի 5 հեքիաթ, որոնք հարում են Վասպուրականին: Նույնը չենք կարող ասել Խնուսից գրի առնված և ԷԱԺ-ի 4-րդ հատորում լույս ընծայած մի հեքիաթի մասին, որը չի մտնում Վասպուրականի հեքիաթաշարքի մեջ, բայց մասն է կազմում Ս.Հայկունու գրի առած հեքիաթային ժառանգության: Նույնը կարող ենք ասել նաև Հայկունու գրի առած և ԷԱԺ 2-րդ հատորում տպագրած Չարսանճազի 11 հեքիաթների: Հիշ-

ված 11 հեքիաթները պատմել է նշանավոր ասացող Մինաս բաբարը, որի պատմած հեքիաթներից մեկը մնացել է անավարտ՝ մահվան պատճառով:

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակության ներկա 16-րդ հատորի ձեռագիր, անտիպ նյութերը պատկանում են երախտաշատ Երվանդ Լալայանի 1915 - 1916 թթ. խմբարշավին: Այստեղ գերակշռում են իսլաթի (Ախլաթ) նյութերը, որոնք գրի են առել Արտաշես Բարսեղյանը (12), Երվանդ Պեգազյանը (1), Սենեքերիմ Շալջյանը (1), Նազարեթ Մարտիրոսյանը (3): Սրանց գումարվում է Երվանդ Պեգազյանի գրի առած երկու ձեռագիր հեքիաթը Արճեշից:

«Հայ ժողովրդական հեքիաթների» 16-րդ հատորը պարունակող հեքիաթներն ըստ բնույթի ու բովանդակության հետևյալ բաժանումն ունեն. հրաշապատում հեքիաթներ՝ 43 հատ, կենդանական-առակատիպ՝ 1, արկածային-նովելատիպ՝ 7, անեկդոտատիպ՝ 5: Ինչպես պարզորոշ երևում է ժողովածուում գերակշռում են դասական-հրաշապատում հեքիաթները: Ընդհանուր հայտարարի բերելով քանակական կողմը՝ հատորն ընդգրկում է ընդամենը 55 հեքիաթ, որից տպագիր են՝ 35, ձեռագիր-անտիպ՝ 20 հատ: Ժողովածուի հեքիաթների ասացողներն ըստ սեռի՝ տղամարդ՝ 36, կին՝ 14, 4-ի մասին տեղեկություն չի հայտնված: Հեքիաթների բանահավաքները տղամարդ են և գրի են առել՝ Ս.Հայկունի՝ 35, Ա.Բարսեղյանը՝ 12, Ե.Պեգազյանը՝ 3, Ա.Շալջյանը՝ 2, Ն.Մարտիրոսյանը՝ 2: Ասացողների ու բանահավաքների թվական կազմը մեզ մի տեղեկություն է հաղորդում, որը սոցիոլոգիական հետաքրքրություն է ներկայացնում: Հարցն այն է, որ կին ասացողներ կան, բայց կին բանահավաքներ չկան: Ինչ-որ տեղ սա բնական է, եթե հաշվի առնենք հասարակական-քաղաքական պայմանները և կնոջ վիճակն այդ պայմաններում:

Այժմ ավելի մանրամասն քննենք հեքիաթների հատորի պարունակած նյութերի պատկերը:

Բուն Վան-Վասպուրականից ներկայացված է Ս.Հայկունու գրառմամբ մի տպագիր հեքիաթ՝ «Մարգրտաշար» խորագրով, որը պատմել է Եղիսարեթ Կոքանճյանը:

Աշխարհագրական-տեղագրական առումով ներկա ժողովածուի մեջ աչքի են ընկնում Ս.Հայկունու գրառած (7 հատ) Վասպուրականի նահանգի մեջ մտնող իսլաթի (կամ Ախլաթի) տպագիր հեքիաթները: Դրանցից երեքը գրի են առնվել բուն իսլաթում՝ «Օխեշ», «Արար աշխարհի գեղեցկուհին», «Ուստա Մուրատ» (ասացողներն անհայտ): Տպագրված հեքիաթներից մեկը գրի է առնված իսլաթի Զրիկ գյուղում, ասացող Մելքոն Մելիքի Մուրադյանից, «Հաճի Սայաթ» խորագրով, մյուսը՝ «Սինամ թա-

գավոր և Գյուլ», գրի է առնված Խլաթի Տափավանք գյուղում, ասացողը ոմն Պողոս, հաջորդը գրի է առնված Խլաթի Քիրս գյուղից՝ «Դարդոտ ռես Մուրատ», ասացող՝ տեղացի Արևշատ կամ այլ անունով՝ Սարիբեխ: Սույն Արևշատը կամ Սարիբեխը շնորհաշատ ասացող է եղել: Ս.Հայկունին նրանից գրի է առել մեծաքանակ բանահյուսական բազմաթանր նյութեր (տե՛ս էԱժ, 2 -րդ, 4 -րդ, 6 -րդ):

Անդրադառնալով ներկա հատորի Խլաթ (Ախլաթ) բնակավայրերի հեքիաթներին, պետք է ընդգծել Ե. Լալայանի խմբարշավի ձեռք բերած հարուստ նյութերի արժեքը: Այդ նյութերի մեջ առանձնապես արժեքավոր են Արտաշես Բարսեղյանի գրառումները: Բանահավաքը խնամքով նշել է գրառման վայրերն ու ասացողներին: Նյութերը գրի է առնված Խլաթ (Ախլաթ), Կծվակ, Տափավանք, Կուշտյան (Կոշտյան), Ծղակ անուններով վայրերում: Խլաթին զուգահեռ հիշատակվում է Բզնունիք: Այս տեղանունները, մասամբ պատմական անցյալ ունեն, մասամբ էլ որպես կրկնանուններ օգտագործվում են բնակավայրերում: Բանահավաքները մեկ առ մեկ նշել են տվյալ նյութերը պատմողներին, մանրամասն տեղեկություններ տվել նրանց կյանքի ու գործունեության մասին: Հեքիաթների մեծ մասը պատմել են Կուղրաթ (Խուղրաթ) Սարգիսյանը, Մկրտիչ Միրզոյանը, Մխիթար Վարդանյանը և այլոք: Սույն հատորի մեջ Վասպուրականին առնչվում են Արճեշի բնակավայրերից Ս. Հայկունու գրառած ու տպագրած նյութերը, որոնցից ուշագրավ են հատկապես «Անծը Պողպատ» («Ճան Պոլատ»), որը պատմել է Արճիշաբնակ մի մոկացի, ինչպես նաև մի այլ հեքիաթ՝ «Կնիկը ջորիի փոխված»:

Ներկա հատորում նշանակալից տեղ են գրավում Արճեշի ձեռագիր անտիպ հեքիաթները, որոնք գրի է առել Ե.Պեգազյանը՝ «Թագավորի տղա Ջան-Փոլատ» խորագրով, որը պատմել է Արճեշի Ծայծակ գյուղացի Անթառան Մանուկյանը, ինչպես նաև մի այլ ուշագրավ հեքիաթ՝ «Խեր խերյաթ էրող մարդ»:

Հատորում հարուստ են ներկայացված Վասպուրականին առնչվող Արծկե գավառի հեքիաթները: Այդ հեքիաթները գրի են առնվել Արծկեի Առնչկույս գյուղացի Նշանավոր ասացող Դավիթ Մուխսի Հարությունյանից, որոնք գրի է առել Սարգիս Հայկունին և հրատարակել էԱժ -ի 4 -րդ հատորում (1902թ.): Դրանք են՝ «Մեռնող Մանուկ», «Ջան Փոլատ», «Շնորհալի աղջիկը», «Արևելոց և Արևմտոց թագավոր», «Սագարած աղջիկը», «Արդարադատ թագավոր», «Խելքով խարս ու դովաթ»:

Ոչ պակաս ուշագրավ ու հետաքրքրական են Վասպուրականին աշխարհագրական ու ազգագրական առումով հարակից Նորադուզ գավառի

Տիմ գյուղից գրի առնված 5 հեքիաթները, որոնք նույնպես գրի է առել Սարգիս Դայկունին և 1902թ. հրատարակել էԱժ-ի 4-րդ հատորում: Այս հեքիաթները պատմել է տեղացի Պետրոս Վերտոյան-Խոսրովյանցը: Դրանք են՝ «Մանուկ», «Լավ կին ընտրել», «Տատ ու Պետատ», «Երկու սուտասան», «Աստղծու իրես դոր ի»:

Վասպուրականի ներկա հատորին տեղագրական, ազգագրական ու լեզվաբարբառային առումով, ըստ էության, չեն առնչվում Զարսանճագ գավառի 11 հեքիաթները: Զարսանճագի այդ 11 հեքիաթները գրի է առել և հրատարակել Սարգիս Դայկունին և քանի որ Զարսանճագի նյութերն առանձին հատոր չեն կարող կազմել կամ կցվել մեկ այլ հատորի, ուստի նպատակահարմար ենք գտել դրանք կցել Վասպուրականի նյութերին:

Այսպիսով, «Հայ ժողովրդական հեքիաթների» 16-րդ հատորով ամփոփվում են Վասպուրականի հեքիաթների տպագրությունը: Ժամանակագրական առումով այն ընդգրկում է 1900-ական թվականներին Սարգիս Դայկունու գրառումները, ապա Մեծ Եղեռնին հաջորդած տարիների՝ 1915 - 1916 թթ., Ե.Լալայանի արշավախմբի ուժերով գրառված հեքիաթները:

Հեքիաթների ներկա հատորը, լեզվաբարբառային տեսակետից, ի տարբերություն նախորդ՝ 14 և 15-րդ հատորների, որոնք ընդգրկում են գերազանցապես Վանի բարբառով նյութեր, բավականին խայտաբղետ է: Բուն Վանի բարբառին զուգահեռ հանդիպում են Խլաթի, Արճեշի, Արծկեի, Նորադուզի խոսվածքներով, ինչպես նաև բոլորովին այլ՝ Զարսանճագի բարբառով հեքիաթներ: Դրանք այս հատորում զետեղելու մասին վերը խոսել ենք: Լեզվաբարբառային խայտաբղետություններին նպաստել են նաև որոշ հանգամանքներ, որոնցից մեկը բանահավաքներից ոմանց՝ գրառված հեքիաթների բարբառին անծանոթ լինելն է, ինչը և պատճառ է դարձել բարբառի քերականական և հնչյունաբանական միօրինակության խախտման ու աղավաղումների: Նույն երևույթը հանդես է գալիս ասացողների լեզվում, երբ հեքիաթ պատմող-ասացողը քաջատեղյակ չէ տվյալ բարբառի առանձնահատկություններին ու նրբերանգներին:

«Հայ ժողովրդական հեքիաթների» 16-րդ հատորում ևս, որպես կանոն, պահպանված են բնագրագիտական այն սկզբունքները, որոնք մշակված ու հաստատված են հեքիաթների գիտական համահավաքի հա-

մար, հաշվի առնելով նաև տվյալ հատորի նյութերի բնույթն ու առանձնահատկությունները:

Հրատարակվող հեքիաթների հատորում ընդգրկված են գերազանցապես այն հեքիաթները, որոնց բնագրերը իրենց կառուցվածքով ու բովանդակությամբ ամբողջական են:

Հրատարակվող հեքիաթներում դրանց բնագրերը դասակարգված են ըստ ազգագրական շրջանի (տեղի) և ասացողների: Յուրաքանչյուր ասացողի պատմած հեքիաթները հատորում տեղաբաշխվում են ըստ հեքիաթի ժանրային բնույթի՝ հրաշապատում, արկածային, իրապատում և այլն:

Հատորներում պահպանվում է բնագրերի ամբողջականությունը: Բացառվում է հեքիաթի բնագրի փոփոխությունը (խմբագրել, ուղղել, վերանայել և այլն):

Բնագրի մեջ բանահավաքների ընդմիջարկումները (առանձին դեպքերի ու արտահայտությունների բացատրությունը, թարգմանությունը և այլն) առանձնացվում է բուն բնագրից և դրվում տողատակին, նշելով՝ «ծանոթություն բանահավաքի»:

Պահպանվում է հեքիաթների լեզուն՝ բարբառը, կիրառելով մոր ուղղագրություն: Պատահում են դեպքեր, երբ որոշ բանահավաքներ հետևողական չեն հեքիաթների լեզվաքերականական և հնչունական յուրահատկությունների պահպանման հարցում:

Հեքիաթների բովանդակությունը ճիշտ ընկալելու, ինչպես նաև բանավոր խոսքի նրբերանգները հաղորդելու նպատակով ճշգրտվում է հեքիաթների բնագրերի կետադրությունը, պարբերությունների բաժանումը, երկխոսությունները, ուղղակի և անուղղակի խոսքի կիրառումը: Եթե կա նաև ուրիշի ուղղակի խոսք, տարբերելու համար վերջինս վերցվում է չափերտների մեջ: Հստակեցվում են առոգանության և տրոհության նշանները:

Բնագրերում մեծատառով են գրվում հատուկ անունները, հերոսների մականունները, երևակայական վայրերի, կենդանիների ու էակների անունները: Ուղղված են հեքիաթների բնագրերում հանդիպող բացահայտ սխալներն ու վրիպումները:

Հեքիաթների հատորը բացի բուն բնագրից ունի նաև ծանոթագրություններ, որտեղ հերթականությամբ լուսաբանվում է տվյալ հատորում տեղ գտած բոլոր հեքիաթների գրառման պատմությունը, բառարան, որն ընդգրկում է հատորում տեղ գտած բարբառային դժվար հասկանալի և օտար ու փոխառյալ բառերի բացատրությունները, ցանկեր՝ տեղանուններ-

րի, անձնանունների և առարկայական: Հիշյալ ցանկերը, քանի որ միավորում են ազգագրական նույն շրջանը՝ Վասպուրականը, կմշակվեն և կտեղադրվեն երեք հատորի (14 - 16) համար:

Հատորում հանդիպող համառոտագրությունների բացատրություն.

ԲԱ - ՀԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի բանահյուսական արխիվ,

ժ.ա. - ծանոթագրություն ասացողի,

ժ.բ. - ծանոթագրություն բանահավաքի,

ժ.կ. - ծանոթագրություն կազմողի:

